ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 փետրվարի 2026 թվականի N 201 - Ա

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և 34-րդ հոդվածի 1-ին մասը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ քաղ. Երևան, Շենգավիթ, Մասիսի փողոց 1 հասցեում գտնվող՝ 186 593 904.91 դրամ անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով 809.2 քառ. մետր մակերեսով մասնաշենքը, 16 քառ. մետր մակերեսով պահակատունը, 13 քառ. մետր մակերեսով պարիսպը և դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.181492 հա հողամասը (իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 09042018-01-0025, այսուհետ՝ գույք) մեկ տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկա-պատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (գրանցման համարը՝ 269.210.02643, այսուհետ՝ կազմակերպություն):

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կազմակերպության հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)՝ դրանում նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման կազմակերպության միջոցների հաշվին.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված պայմանագրի ժամկետի ավարտից հետո գույքն անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել «Երևանի թիվ 1 արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ վերջինիս հետ կնքելով գույքի անհատույց, անժամկետ օգտագործման պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ կնքվող պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման վերջինիս միջոցների հաշվին.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում «Երևանի թիվ 1 արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների գործընթացը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

26.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ